ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՈՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ № 266

21-ը դեկտեմբերի 2020թ.
Ք. Նոր Հաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Պետրոս Գյուրջյան ԱՊԸ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Թումանյան 11 հասցեի տարածքում գտնվող հիմնական շինությաննների ներսում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ ըստ N6462 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ ***որոշումեմ.***

1.Տալ *Պետրոս Գյուրջյան ԱՊԸ-ին* (վկայական N01Ա070062) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Թումանյան 11 հասցեի տարածքում գտնվող հիմնական շինությաննների ներսում տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելու թույլտվություն 2020 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

21-ը դեկտեմբերի 2020թ.
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21-ը դեկտեմբերի 2020թ. N 267
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Ռիմա Անդրանիկի Բալյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.06 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավ արևելյան թաղամաս, 14-րդ փողոց, թիվ 24 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2020 թվականի N 268

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000(հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

21.12.2020թ.
ք. Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 268 որոշման

ՑԱՆԿ

ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Գումարի չափը՝ դրամ |
|---|---|---|
| 1. | Արմեն Թադևոսյան | 70000 |
| 2. | Սերիկ Բրուտյան | 70000 |

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՆՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը դեկտեմբերի 2020 թ. N 269

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Ս.ՋՈՒԼՖՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, հաշվի առնելով Միքայել Ռուբենի Լազարյանի համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

**1.** Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 21122020-07-0075 վկայական) Ս. Ջուլֆյան թաղամասի 6-րդ փողոցի թիվ 6/1 հասցեում գտնվող 80.55 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին՝ 75.57 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.01105 հա մակերեսով, 07-006-0005-0143 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Միքայել Ռուբենի Լազարյանին:

**2.** Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

**3**. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2100 (երկու հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

3.2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

**4.** Միքայել Ռուբենի Լազարյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 169155 (մեկ հարյուր վաթսունինը հազար հարյուր հիսունհինգ) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 324870 (երեք հարյուր քսանչորս հազար ութ հարյուր յոթանասուն) դրամ՝ հողամասի գինը.

**5.** Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Միքայել Ռուբենի Լազարյանի կողմից:

**6**. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Միքայել Ռուբենի Լազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ.Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՐՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ № 270

22-ը դեկտեմբերի 2020թ.
ք. ՆորՀաճն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Լյուբա Հովսեփյան Ա/Ձ-ն* դիմել է իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Անդրանիկի 4 հասցեի տարածքում գտնվող 25ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով: Հաշվի առնելով, որ ըստ 6496,6497 անդորագրերի դիմումատուն 2020 թվականի համար կատարել է Նոր Հաճն համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի №47-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Տալ *Լյուբա Հովսեփյան Ա/Ձ-ին* (վկայական80.01266) իր գործունեության վայրում՝ Նոր Հաճն համայնքի Անդրանիկի 4 հասցեի տարածքում գտնվող 25ք.մ ընդհանուր մակերես ունեցող հիմնական շինության ներսում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար:
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական, եկամուտների հարցերով առաջատար մասնագետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ... 03301132

22-ըդեկտեմբերի 2020թ
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 Նոր Հաճն,Տոռոզյան 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22-ը դեկտեմբերի 2020թ. N 271
Նոր Հաճն համայնք

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի, հիմք ընդունելով Խաչիկ Գուրգենի Վարդանյանի (ծնված՝ 21.03.1978 թ.) դիմումը, որով հայտնում է, որ Նոր Հաճն համայնքի Անդրանիկի փողոցում գտնվող բնակելի տունը կառուցվել են 2000 թվականին, որոնց նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Նոր Հաճն համայնքի Անդրանիկի փողոցում գտնվող բնակելի տան և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 116.7 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Խաչիկ Գուրգենի Վարդանյանի սեփականության իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 116.7 քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 155.95 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասի հատակագծերը (կցվում են):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Անդրանիկի փողոց, թիվ 17 հասցե**:
4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչիկ Գուրգենի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@maiI.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 դեկտեմբերի 2020 թվականի N 272

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի թվով չորս բնակիչների դիմումները, և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով դրամական օգնություն ցույց տալ սոցիալապես անապահով անձանց՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան**

22.12.2020թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՎԵԼՎԱԾ
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 272 որոշման

ՑԱՆԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Գումարի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Գալինա Խալափյան | 25000 |
| 2. | Լուսինե Արամյան | 25000 |
| 3. | Ժենյա Ջհանգիրյան | 25000 |
| 4. | Մանյա Առաքելյան | 25000 |

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ... ՏԻՍ ԵԵ * 03301132 *

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23-ը դեկտեմբերի 2020 թ. N 273
Նոր Հաճն

### ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով , Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Մամիկոն Հմայակի Ղալեչյանի (ծնված՝ 25.04.1955թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Մամիկոն Հմայակի Ղալեչյանի և Վարսիկ Ռուբենի Ղազարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող 07-006-0043-0009-ից կադաստրային ծածկագրով, 0.060 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.09.1991 թվականի թիվ 9 որոշմամբ) և դրանից ավել օգտագործվող մինչև 20 տոկոս 0.00508 հա հողամասի նկատմամբ /ընդամենը՝ 0.06508 հա/, քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականցման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (կցվում են):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 1ին թաղամաս, 2-րդ փողոց, թիվ 22 հողամաս:**
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

03301132

Ղալեչյան Մամիկոն Հմայակի
Ղազարյան Վարսիկ Ռուբենի

Անուն, ազգանուն

Կոտայք

մարզ

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հողհատկացման հիմքը

Ք. Նոր-Հաճն

համայնք

հասցե

Հաստատում եմ
L.S.
«23» 2020թ.

Մասշտաբ 1:1000




## ՀՈՂԱՄԱՍ

| | |
|---|---|
| Մակերեսը քմ (հա) | 0.06508 հա |
| Ծածկագիրը | 07-006-0043-0009-հց |
| Նպատակային նշանակությունը | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակությունը | Բնակելի կառուցապատման |
| Հողամասը ծանրաբեռնված է | |

| Անկյունային բեկման կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Հեռավորությունը (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) |
|---|---|---|---|---|
| 1 | 8464128.08 | 4462299.47 | 39.61 | |
| 2 | 8464114.54 | 4462336.69 | 15.96 | |
| 3 | 8464129.74 | 4462341.57 | 23.54 | |
| 4 | 8464138.28 | 4462319.63 | 11.23 | |
| 5 | 8464142.36 | 4462309.16 | 5.13 | |
| 6 | 8464143.80 | 4462304.24 | 3.24 | |
| 7 | 8464140.73 | 4462303.20 | 4.73 | |
| 8 | 8464136.18 | 4462301.94 | 8.47 | |
| 1 | 8464128.08 | 4462299.47 | | |

## ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ

| Համարը՝ ըստ հողամասի հատակագծի | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Անկյունային բեկման կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Հեռավորությունը (մետր) |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

Կատարող _______ (ստորագրություն) Ստյոպա Աբգարյան (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 0387 տրման ամիս, ամսաթիվը 03.12.2019 թ.

Իրավաբանական անձի 80.1104679 Ա/Ձ Ստյոպա Աբգարյան _______ (ստորագրություն)

23.12.20թ
տրման ամսաթիվը

STYOPA ABGARYAN
СТЁПА АБГАРЯН
43134635

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

23-ը դեկտեմբերի 2020թ. N 274
Նոր Հաճն

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ,ՎԱՐՍԻԿ,ՄՀԵՐ ԵՎ ԱՄՐԱՄ ԱՂԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով ,Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18-ը մայիսի 2006 թվականի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը որ բնակելի տունը կառուցվել է 1995 թվականին, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ Վարսիկ Իվանի Աղասյանի (ծնված՝ 28.12.1961թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Սամվել Լևոնի Աղասյանի, Վարսիկ Իվանի Աղասյանի, Միեր Սամվելի Աղասյանի և Ամրամ Սամվելի Աղասյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող 07-006-0005-0006 կադաստրային ծածկագրով, 0.060 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.05.1992 թվականի թիվ 5 որոշմամբ), քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (կցվում են).
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարույր Սևակ թաղամաս 5-րդ փողոց, թիվ 15 հասցե:**

4. Նոր Հաճն համայնքի Պարույր Սևակի թաղամասի 5-րդ փողոցի, թիվ 15 հասցեում գտնվող Սամվել Լևոնի Աղասյանի, Վարսիկ Իվանի Աղասյանի, Մհեր Սամվելի Աղասյանի և Ամրամ Սամվելի Աղասյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 07-006-0005-0006 կադաստրային ծածկագրով, 0.060 հա օրինական հողամասի վրա կառուցված 437.6 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել նշված անձանց սեփականություն:
5. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 4-րդ կետում նշված շինությունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոներին համապատասխան, չի հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սամվել Լևոնի Աղայան,Վարսիկ Իվանի Աղայան
Միհր Սամվելի Աղայան,Ամրամ Սամվելի Աղայան
Անուն, ազգանուն
Կոտայք
մարզ

Հողհատկացման հիմքը
Նոր Հաճն
համայնք
հասցե

Հաստատում եմ՝
«23» 2020թ.

Մասշտաբ 1:500




## ՀՈՂԱՄԱՍ

| Մակերեսը քմ (հա) | 0.06000 հա |
|---|---|
| Ծածկագիրը | 07-006-0005-0006 |
| Նպատակային նշանակությունը | Բնակավայրերի |
| Գործառնական նշանակությունը | Բնակելի կառուցապատման |
| Հողամասը ծանրաբեռնված է | |

| Անկյունային բեկման կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Հեռավորությունը (մետր) | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանունը (անվանումը) |
|---|---|---|---|---|
| 1 | 8464116.47 | 4463907.38 | 18.23 | |
| 2 | 8464113.24 | 4463925.32 | 11.51 | |
| 3 | 8464124.68 | 4463926.59 | 0.71 | |
| 4 | 8464124.64 | 4463927.31 | 18.59 | |
| 5 | 8464142.77 | 4463931.43 | 23.96 | |
| 6 | 8464144.33 | 4463907.52 | 8.56 | |
| 7 | 8464135.76 | 4463907.39 | 3.20 | |
| 8 | 8464132.56 | 4463907.33 | 16.09 | |
| 1 | 8464116.47 | 4463907.38 | | |

## ՇԵՆՔ,ՇԻՆՈՒԹՅԱՆ

| Համարը՝ ըստ հողամասի հատակագծի | Գործառնական նշանակությունը (անվանումը) |
|---|---|
| 1 | Բնակելի տուն |

| Անկյունային բեկման կետեր | Կոորդինատները Y | Կոորդինատները X | Հեռավորությունը (մետր) |
|---|---|---|---|
| 1 | | | |
| 1 | 8464118.49 | 4463907.37 | 17.90 |
| 2 | 8464116.44 | 4463925.15 | 13.35 |
| 3 | 8464129.70 | 4463926.69 | 7.50 |
| 4 | 8464130.56 | 4463919.24 | 1.55 |
| 5 | 8464129.02 | 4463919.06 | 11.80 |
| 6 | 8464130.38 | 4463907.34 | 11.88 |
| 1 | 8464118.49 | 4463907.37 | |

Կատարող _______ (ստորագրություն) Ստյոպա Աբգարյան (Անուն, ազգանուն)

Որակավորման վկայականի համարը 0387 տրման ամիս, ամսաթիվը 03.12.2019 թ.

Իրավաբանական անձի 80.1104679 Ա/Ձ Ստյոպա Աբգարյան _______ (ստորագրություն)

STYOPA ABGARYAN
СТЕПА АБГАРЯН
43134635

23.12.2020
տրման ամսաթիվը

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 275

## ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ <<ԱՐԾԻՎ ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐ>>ՋՈԿԱՏԻ ՎԱՇՏԻ ՀՐԱՄԱՆՏԱՐ ՄԱՐՏԻՆ ՍՈՒՐԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում զոհված <<Արծիվ մահապարտներ>> ջոկատի վաշտի հրամանատար Մարտին Սուրիկի Մարտիրոսյանի ընտանիքին Ամանորի առթիվ տրամադրել համայնքի բյուջեի գործառական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4729 <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածից 50000 դրամ :

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին՝ ապահովել ֆինանսավորումը և կատարել վճարումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2020 թվականի N 276

## ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամկետային զինծառայող Մուշեղ Վարդանի Մկրտչյանը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ**.

1.Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող ժամկետային զինծառայող Մուշեղ Վարդանի Մկրտչյանի ընտանիքին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 100000 ( մեկ հարյուր հազար)դրամ դրամական օգնություն :

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

24 Դեկտեմբերի 2020թ.
Նոր Հաճն համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-ը դեկտեմբերի 2020թ. N 277
Նոր Հաճն

### ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՏԵՓԱՆ ԽԱՉԻԿԻ ԻՆԱՆՑԻ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՎԻԿՏՈՐԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով ,Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18-ը մայիսի 2006 թվականի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը որ բնակելի տունը, անասնաշենքը և քարե պարիսպը կառուցվել են 1996 թվականին, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ Ստեփան Խաչիկի Ինանցի (ծնված՝ 19.11.1960թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Ստեփան Խաչիկի Ինանցի և Անահիտ Վիկտորի Միրզոյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող 07-006-0041-0017 կադաստրային ծածկագրով, 0.060 հա տնամերձ հողամասի (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.05.1992 թվականի թիվ 5 որոշմամբ), և դրանից ավել օգտագործվող մինչև 20 տոկոս 0.01184 հա հողամասի նկատմամբ /ընդամենը՝ 0.07184 հա/ քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի գծեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (կցվում են):

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 1-ին թաղամաս, 1-ին փողոց, թիվ 11 հասցե:**
4. Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 1-ին թաղամասի 1-ին փողոցի, թիվ 11 հասցեում գտնվող Ստեփան Խաչիկի Ինանցի և Անահիտ Վիկտորի Միրզոյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 07-006-0041-0017 կադաստրային ծածկագրով, 0.07184 հա օրինական հողամասի վրա կառուցված 94.77 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, 42.83 քմ ընդհանուր արտաքին մակերեսով անասնաշենքը և 16.04 մակերեսով պարիսպը ճանաչել նշված անձանց սեփականություն:
5. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 4-րդ կետում նշված շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չի հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան**